ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 28.03.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2019/50

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանը, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26.02.2019թ. թիվ 26/26/3067-19 գրությամբ «Հարսնաձոր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (այսուհետ՝ Պատվիրատու) 20.02.2019թ. թիվ 96 գրության հիման վրա, 26.02.2019թ. թիվ 26/26/3067-19 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել <Հարսնաձոր> ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **«Հարսնաձոր» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.**

«Հարսնաձոր» ՍՊԸ-ի կողմից գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Հարսնաձոր» ՍՊԸ-ն պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի քննության նպատակով 01.03.2019թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր մասնակցությունը:

3. **Հայաստանի տարածքային զարգացման հիմանադրամի կողմից ներկայացված փաստերը.**

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը (այսուհետ՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 20.02.2019թ. թիվ 96 գրությամբ հայտնել է, որ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից 2019 թվականի հունվարի 22-ին հրապարակվել է «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/4/5/9» ծածկագրով հրավեր, որի հայտերի բացման նիստը տեղի է ունեցել 29.01.2019թ.: Հայտերի բացման նիստի արդյունքում ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Հարսնաձոր» ՍՊԸ-ն: Վերջինիս ուղարկվել է ծանուցում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով և հրավերով սահմանված որակավորումը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու նպատակով, ինչի համար սահմանվել է վերջնաժամկետ երեք աշխատանքային օր տևողությամբ /վերջնաժամկետ՝ 04.02.2019թ./:

Մասնակիցը սահմանված ժամկետում ընթացակարգի քարտուղարի էլեկտրոնային փոստին որևէ փաստաթուղթ չի ուղարկել և բանավոր ձևով հրաժարվել է ընթացակարգին հետագա մասնակցությունից՝ նշելով, որ 1-ին չափաբաժնի համար առաջարկված գինը նախատեսված է եղել 3-րդ չափաբաժնի համար, իսկ 2-րդ չափաբաժինը՝ 1-ինի համար:

Պատվիրատուն հայտնել է, որ հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի ընթացքում մասնակցի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել: Որակավուոմը

հիմնավորող փաստաթղթերը տրամադրելու պահանջ է ներկայացվել հաջորդ տեղ զբաղեցրած «Վարդանյան Շին» ՍՊԸ-ին:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի քննության նպատակով 01.03.2019թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2019/50 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2019/50 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1.Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար ՀՀ Արարատի մարզի Գետազատի, ՀՀ Արագածոտնի մարզի Նոր Ամանոսի, Մաստարայի խողովակաշարերի հետ կապված շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է ՀԾ-ԳՀ-ԱԾ-ԱՇՁԲ-2019/4/5/9 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Հարսնաձոր» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.01.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով «Հարսնաձոր» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին 30.01.2019թ. սահմանված կարգով ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնելու որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 20.02.2019թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրել է, որ Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած «Հարսնաձոր» ՍՊԸ-ն որակավորումը հիմնավորող փաստաթղթեր չի ներկայացրել, մասնավորապես վերջինս բանավոր կերպով հրաժարվել է ընթացակարգին հետագա մասնակցությունից:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 26.02.2019թ. թիվ 26/26/3067-19 գրությունը, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի 20.02.2019թ. թիվ 96 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: ***Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության

համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո ***հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում*** իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և ***հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը*** (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը ***հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը***, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով ***<u>սահմանված ժամկետում</u>*** ***<u>փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը</u>*** և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար ՀՀ Արարատի մարզի Գետազատի, ՀՀ Արագածոտնի մարզի Նոր Ամանոսի, Մաստարայի խողովակաշարերի հետ կապված շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է ՀԽ-ԳՀ-ԱԾ-ԱՇՁԲ-2019/4/5/9 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Հարսնաձոր» ՍՊԸ-ն:

«Հարսնաձոր» ՍՊԸ-ն հայտի թիվ 3 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/4/5/9» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.01.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով «Հարսնաձոր» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին 30.01.2019թ. սահմանված կարգով ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնելու որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 20.02.2019թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրել է, որ Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած «Հարսնաձոր» ՍՊԸ-ն որակավորումը հիմնավորող փաստաթղթեր չի ներկայացրել, մասնավորապես վերջինս բանավոր կերպով հրաժարվել է ընթացակարգին հետագա մասնակցությունից:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ II-ի 3-րդ կետի 3.1 ենթակետով նախատեսվել է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովի քարտուղարի՝ հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով հանձնաժողովին է ներկայացնում հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 6.1-ի:

Այսպիսով՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը սահմանում է, որ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը ***հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել*** որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ***ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը:*** Սույն մասով ***սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը*** և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 7-րդ կետի 7.13-րդ ենթակետի 4-րդ պարբերության համաձայն՝ հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը՝ համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը: ***Սույն ենթակետով սահմանված ժամկետում ապրանքի ամբողջական նկարագիրը ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը*** և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով սույնհրավերի 1-ին մասի 7.13-ից 7.21-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

ՀՀ կառավորության 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ

մասնակիցը կամ ***<u>առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում</u>***»:

Այսպիսով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «գ» ենթակետերը սահմանում են, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,***

Գտնում եմ, որ «Հարսնաձոր» ՍՊԸ-ն ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/4/5/9 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում խախտել է ստանձնած պարտավորություն, քանի որ վերջինս հայտի թիվ 3 հավելվածով պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/4/5/9 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, սակայն «Հարսնաձոր» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ընդհանրապես չի ներկայացրել պահանջվող փաստաթղթերը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26.02.2019թ. թիվ 26/26/3067-19 գրությամբ «Հարսնաձոր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված

ընթացակարգը բավարարել և «Հարսնաձոր» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ